ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N15-16-1

ՀՖՖ
ՖՈՒՏԶԱԼԻ և ԿԱՆԱՆՑ ՖՈՒՏԲՈԼԻ ԿՈՄԻՏԵԻ ՆԻՍՏԻ

17 սեպտեմբերի 2015թ | ք. Երևան

ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՄԲ՝ Ս.Ավետիսյանի

Կոմիտեի անդամներ
Ս.Ավետիսյան.
Ռ.Նազարեթյան
Խ.Զարգարյան

Քարտուղար
ՄԿԱ բաժնի պետ՝ Ռ.Դալլաքյան

Հրավիրված
ՀՊՏՀ Երևան, Հ.Գաբրիելյան՝ ամբիոնի վարիչ
ՀՊՄՀ Վանաձոր Զ.Էվոյան ամբիոնի վարիչ
Սլավոնական համալսարան Երևան Ա.Սաֆարյան ակումբի տնօրեն
UWC քոլեջ Դիլիջան Գ.Թովմասյան մարզիչ
Արթիկ Ա.Երիցյան ԱՖԴ մարզիչ
Իջևան Ա.Վանեսյան ՀՖՖ-ի մարզի ներկայացուցիչ
Քաղաքապետարան Հրազդան Ա.Հարությունյան մարզիչ
ՀՊՄՀ Երևան Ս.Բարսեղյան ամբիոնի վարիչ
Ալավերդի Ռ.Ծատինյան ՀՖՖ-ի մարզի ներկայացուցիչ
Եղվարդ մարզադպրոց Ն.Գևորգյան մարզիչ

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

ՀՀ ֆուտզալի 2015-2016թթ խաղաշրջանի առաջնության հարցերի քննարկում:

Օրակարգի սկզբում Խ.Զարգարյանը կոմիտեի անդամներին ներկայացրեց ՀՀ ֆուտզալի բարձրագույն խմբի առաջնությանը մասնակցելու ցանկության հայտնած ակումբների ներկայացուցիչներին: Ս.Ավետիսյանը հանդես եկավ ողջույնի խոսքով և խրախուսեց բոլոր

ակումբներին ներկայացուցիչներին՝ տեղեկացնելով նաև, որ 2015-2016թթ խաղաշրջանի բոլոր մասնակից ակումբներին ՀՖՖ-ի կողմից կտրամադրվեն խաղային մարզաշապիկներ:

Ռ. Նազարեթյանն առաջարկեց ս.թ. հոկտեմբերից ՀՖՖ-ում կազմակերպել ֆուտզալի գործնական և տեսական սեմինարներ առաջնության մասնակից թիմերի մարզիչների համար:

Օրակարգում Ս.Ավետիսյանը հայտարարեց, որ 2015-2016թթ. խաղաշրջանի բոլոր մասնակից ակումբներին կտրվեն նախապես կազմված և մշակված ծրագիր, որը նպատակ ունի ցուցատախտակի և ժամացույց խրոնոմետրի կառավարման ձևը փոխարինել ավտոմատացված համակարգի :

ՄԿԱ բաժնի պետ Ռ. Դալլաքյանը ներկայացրեց Ֆուտզալի բարձրագույն խմբի առաջնությանը մասնակցելու համար պահանջվող բոլոր փաստաթղթերի, ինչպես նաև գրանցման և մյուս անհրաժեշտ բոլոր քայլերի հերթականությունն ու կարևորությունը:

Որոշվեց՝

1.Բոլոր շահագրգիռ Ակումբները (կազմակերպությունները) մինչ ս/թ հոկտեմբերի երկուսը ներկայացնեն ՀՖՖ սահմանված կարգի մասնակցության հավաստագիր:

2. ՀՀ ֆուտզալի առաջնությունը սկսել ս/թ նոյեմբերի 1-ից:

3.Առաջնության մասնակից թիմերին հնարավորության սահմաններում տրամադրել խաղային մարզահագուստ:

4. ՀՖՖ-ում ս/թ հոկտեմբերից կազմակերպել ֆուտզալի գործնական և տեսական սեմինարներ առաջնության մասնակից թիմերի մարզիչների համար:

ՆԱԽԱԳԱՀ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ Խ.ԶԱՐԳԱՐՅԱՆ